



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2020 թվական թիվ 334-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԹԱԽՏԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ  
«ԴԱՍԱԿԱՆԴԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ  
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2.1 մասով, 38-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ և 31-րդ հոդվածներով, Տարածքային կառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարության) համաձայնությունը «Դասավանդի՛ր Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից մշակված ծրագրերի իրականացման նպատակահարմարությունը, Նախարարության կողմից մեթոդաբանության ներդրմանը տրված դրական եզրակացությունը, ինչպես նաև հիմք ընդունելով Հիմնադրամի և ՀՀ Տավուշի մարզպետարանի միջև 2020 թվականի փետրվարի 26-ին կնքված փոխըմբռնման հուշագրի դրույթները

որոշում եմ՝

1. Աջակցել Հիմնադրամին Դիլիջան քաղաքի N 2 հիմնական դպրոցի Թախտայի մասնաճյուղում (այսուհետ՝ Դպրոց) Հիմնադրամի կողմից մշակված ծրագրերին /Առաջնորդության զարգացման ծրագիր, Սերունդ դպրոցներ ծրագիր և այլ/ և նպաստել կրթական նորարարական մեթոդաբանության ներդրման գործընթացին՝ ապահովելով բոլոր հնարավոր պայմանները կրթական ծրագրերի արդյունավետ գործարկման համար:
2. Սահմանել, որ
  - 1) հիմնադրամի կողմից ներդրվող ծրագրերի հիմնական նպատակն է կրթության որակի բարելավումը՝ նորարարական ծրագրերի և մեթոդաբանության կիրառման, Դպրոցի ուսուցիչներին և կամ վարչական/ադմինիստրատիվ անձնակազմին վերապատրաստելու և ծրագրի/երի չափորոշիչներին համապատասխանեցնելու միջոցով, ինչպես նաև կրթության համակարգի կայուն զարգացումը և կրթության գլոբալ համակարգերի ինտեգրմանն ուղղված կրթական առաջավոր հայեցակարգերի, մեխանիզմների, միջազգային փորձի ներդրումն ու տարածումը,

- 2) ծրագրի շրջանակներում ներգրավվելու է Դպրոցի հիմնական ուսուցչական և կամ Վարչական կազմը, իսկ վերապատրաստման ողջ գործընթացը կազմակերպվելու է Հիմնադրամի կողմից վերջինիս կողմից ընտրված միջոցներով և եղանակներով,
- 3) հիմնադրամի կողմից ներդրվող ծրագիրը իրականացվում է Հիմնադրամի կողմից մշակված ոսումնական գործընթացի կազմակերպման, իրականացման ձևերով և ժամկետներում և պետք է համապատասխանի կրթական պետական չափորոշիչներին,
- 4) հիմնադրամի կողմից ներդրված ծրագրի արդյունավետության դեպքում Տավուշի մարզի մյուս հանրակրթական դպրոցներում ևս ներդնել Սերունդ դպրոցներ և կամ այլ ծրագրի ներդրման աշխատանքներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:
3. Ծրագրի արդյունավետ ներդրման նպատակով Հիմնադրամին կամ իր հետ համագործակցող կազմակերպությունների/անձանց համար ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները, այդ թվում շենք/շինության տրամադրում, փորձարկման և ներդրման աջակցում, Ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով ֆինանսական միջոցների ներգրավում՝ նախատեսելով պետական բյուջեի տարեկան պլանում:
4. Հիմնադրամի դիմումի դեպքում վերացնել այն բոլոր խոչընդոտները, որոնք կարող են խոչընդոտել Ծրագրի արդյունավետ իրականացմանը:
5. Սույն որոշման իրականացման վերահսկողությունը վերապահել ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մերուժան Հարությունյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝

ՀԱՅԿ ՉՈՒԱՆՅԱՆ

X 

Signed by: CHOBANYAN HAYK 1503730050

2020թ. սեպտեմբերի 11  
ք. Իջևան